

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՊԱՐՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԳԵՂԱՍԱՐ ԳՅՈՒՂԻ ԲՈՒԺՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԿԵՏԻ ԲՈՒԺՔՐՈՂ (1 ԴՐՈՒՅՔԱՉԱՓ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՍԱՐ

Մրցույթը կկայանա մեկ փուլով:

Մրցույթին մասնակցելու համար անձը աշխատանքային խմբին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի խմբի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է,
2. Փաստաթուղթ՝ պետական նմուշի դիպլոմ միջնակարգ մասնագիտական կրթության մասին,
3. Անձնագրի պատճենը, հանրային ծառայության համարանիշը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում,
6. Մեկ լուսանկար 3X4 չափի:

Պարտադիր պայմաններ են՝

- Միջին մասնագիտական կրթության առկայություն,
- Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Լրացուցիչ պայմաններ են՝

- Պետք է լինի Գեղասար գյուղի բնակիչ,
- Համակարգչով աշխատելու ունակություն,
- Վերջին 5 տարում մասնագիտական աշխատանքի կամ վերապատրաստման առկայություն,

• Տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ՝ անձամբ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում՝ Լոռու մարզ, գ. Մեծ Պարնի, 15-րդ փողոց, շենք 2 հասցեում:

Մրցույթը տեղի կունենա մարտի 15-ին՝ ժամը 12-ին, Լոռու մարզի «Մեծ Պարնիի

Առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում: Հեռ.՝ (0255) 6-17-26, (091) 20-15-52:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ